

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/5

11 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արամայիս Հակոբյանի 14.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 08.04.2014 թ-ի թիվ 195 որոշման դեմ:

Ա/Ձ Արամայիս Հակոբյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Արամայիս Հակոբյանը տեղեկացնում է այն մասին, որ 05.12.2007 թ-ին իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է եղել որպես անհատ ձեռնարկատեր, որի շրջանակներում գործունեություն է ծավալել շուրջ 6 ամիս: Այնուհետև, դիմել է Արմավիրի հարկային տեսչություն գործունեությունը դադարեցնելու նպատակով, սակայն տարիներ անց՝ 08.04.2014 թ-ին, ստացել է ծանուցագիր այն մասին, որ ունի արձանագրված խախտում: Ներկայանալով Արմավիրի ՏՀՏ ստացել է որոշում, որ Ա/Ձ-ն դադարեցնելուց հետո մինչ օրս՝ 2009-2014 թթ-ի ընթացքում, գոյացել է 371.009 դրամ գումարի չափով պարտավորություն, որից ապառք 240.000 դրամ, տույժ 131.009 դրամ:

Տեղեկանալով, որ գումարային պարտավորության չափը շարունակ ավելանում է, դիմել է ՏՀՏ Ա/Ձ-ն լուծարելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունը դադարեցնելու պահից մինչ օրս գործունեություն ընդհանրապես չի իրականացվել և չի տեղեկացվել պարտքի ամենամսյա պարբերաբար ավելացման մասին, գանգատաբերը խնդրում է վերանայել Արմավիրի ՏՀՏ պետի կողմից կայացված թիվ 195 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Արամայիս Հակոբյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը, 08.04.2014 թ-ին ընդունել է թիվ 195 որոշումը, որի համաձայն 03.04.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Արամայիս Հակոբյանի չկատարած հարկային պարտավորությունը կազմում է 371.009 դրամ, որից ապառք՝ 240.000 դրամ, տույժ՝ 131.009 դրամ: Պարտավորությունն առաջացել է 2009-2014 թթ-ի ընթացքում՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև հաշվարկված տույժերի արդյունքում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը

Ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արամայիս Հակոբյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել ղեկավարվելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 08.04.2014 թ-ի թիվ 195 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ.ԻԿՈԲՅԱՆ
